

ՏԵՂԵՎԱՏՈՒ

DIEGHEGADOU

دیگه‌دادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀՔԸ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀՔԸ-Ի ԵԳԻՊՏՈՍԻ ՃՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Զախելս աջ, ա. շարք՝ Տոքը. Վիգելն ճիզմէճեան, Տիար Պերճ Թերզեան, Տիար Օսնիկ Պոլըքտան-եան, Տիար Ժիրայր Տեփոյեան

Զախելս աջ, բ. շարք՝ Տիար Լեւոն Նիկոլեան, Տոքը. Գևորգ Երզնկացեան, Տիկին Կասիա ճղալ-եան, Տիար Ռուբեն Թերզիաշեան



ԳԱՀԻՐԵՒ ՀԲԸՄ-Ի ՀԱՄԱԳՈՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՃԱՏՐԱԿԻ ԴԱՍԸՆԹ-ԱՅ-ՔՆԵՐԸ ՍԿՍԱՆ 15 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՎ

Ուրբաթ, 17 Հոկտեմբեր 2014-ին, Գահիրեւ ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չագըր Մշակութային Կեդրոնին մեջ, ի ներկայութեան 15 արձանագրուած ուսանողներու եւ հետաքրքիր սեղմ շրջանակի մը, բացումը կատարուեցաւ ճատրակի դասընթացըներուն:

Հաւաքը սկսաւ համացանցով փոխանցուած, Երեւանի «Հայկական Համացանցային Համալսարան»ի (Armenian Virtual College «AVC») ղեկավարներուն բարի գալուստի խօսքերով։ Ուսանողներուն շինէց պատգամներ ուղղեցին համալսարանի հիմնադիր Նախագահ՝ Տողթ. Երուանդ Չօրեան, Արփինէ Թաւաքլեան, Աննա Ենգիպարեան եւ Յասմիկ Ջալակիեան։

Ապա, դարձեալ համացանցով, ներկաներուն ցուցադրուեցաւ կարճ տեսերիզ մը ճատրակի դասընթացըներուն մասին, որուն յաջորդեց Գահիրեւ մեջ նիւթին դասաւանդման եղանակին մասին բացատրութիւն մը՝ տրուած Տիկին Աննա Տոլապնեան-Թրայեանի կողմէ (ան հաղորդակցութեան կցորդն է հայրենի Համացանցային Համալսարանի եւ Գահիրեւ միջեւ)։

Խօսք առաւ նաեւ ճատրակի դասընթացըներու պատասխանատու ուսուցիչ Տիար Գեղրգ Աւանեան։

Սոյն ձեռնարկին իր աշակցութիւնը բերած էր Տիկին Ռուպինա Ավանեան-Նորարեւեան։

Եգիպտոսի մեջ, դասընթացըները տեղի կ'ունենան Գահիրեւ ՀԲԸՄ-ի եւ Երեւանի «Հայկական Համացանցային Համալսարան»ի միացեալ ջանքերով։ Գահիրեւ ՀԲԸՄ-ի նպատակն է վերակենդանացնել այս «մտային մարզանք»ը եւ զայն կրկին ներմուծել մեր ակումբներէն ներս, կիրարկելով մեզի ընծայուած արհեստագիտական նորագոյն միջոցները։

Ինչպէս որ նախապէս յիշած էինք, վերոյիշեալ դասընթացըները պիտի ղեկավար ՀԲԸՄ-ի վարչութեան գանձապահ եւ համակարգչային գիտութեան մասնագետ Տիար Գեղրգ Աւանեան։ Ան եղած է եւ է ճատրակի սիրահար մը ու երկարամեայ խաղա-



ցող մը։ Ան խանդավառութեամբ ընդունեց իրեն առաջարկուած «Հայկական Համացանցային Համալսարան»ի ճատրակի ուսուցչի պաշտօնը։ Ան վերոյիշեալ համալսարանն էն համապատասխան փորձառութիւն ձեռք ձգած է եւ համբաւաւոր ճատրակ խաղացող՝ Նորայր Ջալանթարեանի հետ բազմաթիւ բարձր մակարդակի խորհրդակցութիւններ ունենալու ետք, պատրաստ է վարելու Գահիրեւ ՀԲԸՄ-ի եւ «Հայկական Համացանցային Համալսարան»ի միացեալ յայտագիրը։

Այս ծրագրէն կրնան օգտուիլ Գահիրեւ հայ համայնքին պատկանող բոլոր փափառողները։ Դասընթացըները անվճար են։ Անոնք համացանցով սկսած են 13 Հոկտեմբեր 2014-ին։ Հանդիպումները տեղի կ'ունենան շաբաթը անգամ մը, Ուրբաթ առաւօտները՝ ժամը 11-ին, Յելինապուսոյ Սաթենիկ Չագըր Մշակութային Կեդրոնին մեջ։ Իսկ շաբթօնան ընթացքին, տնային պարտականութիւնները եւ դասաւանդութիւնները կը կատարուին համացանցով։

Այսօր, ճատրակի մարզէն ներս, Հայաստան նկատուած է աշխարհի առաջնակարգ երկիրներէն մին։ Այս կը քաջալերէ մեզ, Սփիրութի մեջ, որ հետեւիք մեր հայրենիքի քայլերուն եւ մեր ազգին ապահովենք նորանոր յաջողութիւններ։

ՀԲԸՄ-ի կայքէջն քաղեց՝
Անայիս Ծիզմէճեան